**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 77

## ԱԼԵԿՍԵՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԿՈՐՈԼՅՈՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 որոշմամբ, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, հիմք ընդունելով "ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական՝ 6, 2011-12-05, մուտքագրման ծածկագիր՝ 20235JWMMB/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի 06-043-0015-0004 ծածկագրի տակ գտնվող 0,277հա հողամասում 2020 թ-ին ինքնակամ կառուցված արտաքին մակերեսով 146,43քմ բնակելի տունը և ճանաչել Ալեկսեյ Վասիլեվիչ Կորոլյովի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 150 530 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 78

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0015-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ալեկսեյ Վասիլեվիչ Կորոլյովին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0015-0004 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

**ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, 2փող. թիվ 58**:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 79

″ՆՈԱՍ ՕՐՉԱԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ″ ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 06-043-0213-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ″Տեղական ինքնակառավարման մասին″ ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 43-րդ և 59-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.04.2021թ-ի թիվ 698-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ″ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ″ ԱՁ-ի կողմից /որոկավորման վկայական 014, 2011-12-05, մուտքագրման ծածկագիր՝ 2023EHJ5A7/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.՛Օրենքի ուժով հաստատել 06-043-0213-0005 ծածկագրով ՛ՆՈԱՍ ՕՐՉԱՐԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ″ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմանները, հիմք ընդունելով լիցենզավորված ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը:

2.Տվյալ հողամասին տրամադրել հետևյալ փոստային հասցե՝

ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի, 4փ. հողամաս թիվ 27:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 80

"ՆՈԱՍ ՕՐՉԱԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ" ՍՊԸ ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼԻՃ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 7-րդ հոդվածի 15-րդ կետով և 43-րդ հոդվածով, հաշվի առնելով "ՆՈԱՍ ՕՐՉԱՐԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ" ՍՊԸ-ի հայտը ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ավագանու 18.05.2023 թ-ի թիվ 14 որոշումը և համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլտվությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1."ՆՈԱՍ ՕՐՉԱՐԴՐՍ ԴԻՍԹԻԼԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ" ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0213-0005 ծածկագրով 4,26500հա գյուղատնտեսական հողերի նպատակային խոտհարք նշանակության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս և արհեստական լիճ կառուցելու նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2.Վերը նշված հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 81

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0008-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ալտուշ Ասադովային սեփականության իրավունքով պատկանող 06-043-0008-0002 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

**ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, 2փող. 2փկղ. թիվ 26**:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ